ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО
ОБРАЗОВАНИЯ,
НАУКИ, КУЛЬТУРЫ И
СПОРТА

REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF EDUCATION,
SCIENCE, CULTURE AND SPORT

0010, Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական տուն 2, Հեռ./Тел./Tel.010599600, Ֆաքս/факс/fax (374 10) 52 73 43,
0010, Ереван, В. Саргсян 3, Правительский дом 2, 0010, V. Sargsyan 3, Governmental House 2, Yerevan, www.edu.am,
secretariat@edu.am

No _____ «07» սեպտեմբեր 2022թ.

ՀՈՒՇԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ «ԵՐԿԻՐ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ» ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՄԻՋԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՆՇԱՐԺ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՈՒ ԴՐԱՆՑ ՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԳՈՏԻՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետության կրթության գիտության մշակույթի և սպորտի նախարարությունը (ի դեմս նախարարի տեղակալ՝ Ալֆրեդ Քոչարյանի) և բարերար **«Երկիր և մշակույթ» կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը** (ի դեմս նախագահ՝ Դավիթ Դավթյանի) **(այսուհետ կողմեր)**,

կարևորելով պատմամշակութային ժառանգության արժեքն ու հետագա սերունդներին փոխանցելու անհրաժեշտությունը,

շահագրգռված լինելով օժանդակելու պատմության և մշակույթի հուշարձանների վերականգնմանն ու օգտագործմանը,

անհրաժեշտ համարեցին միավորել կողմերի հնարավորությունները և համատեղ

աշխատանքներ իրականացնել Հայաստանի Հանրապետության պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու դրանց պահպանական գոտիների պահպանության (այդ թվում՝ ուսումնասիրման /պեղման/, ամրակայման, նորոգման, վերականգնման և տարածքի բարեկարգման) աշխատանքների շուրջ:

Հայաստանի Հանրապետության պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու դրանց պահպանական գոտիների պահպանության ուղղությամբ կողմերը պայմանավորվեցին հետևյալի մասին.

1. **Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը՝**

   1) առանձին հուշարձանների ուսումնասիրման, պեղման, ամրակայման, նորոգման, վերականգնման և տարածքի բարեկարգման աշխատանքների կատարման ընթացքում անվճար հիմունքներով կտրամադրի արխիվային փաստաթղթերի պատճենները,

   2) աշխատանքների կատարման ընթացքում կցուցաբերի մասնագիտական և գիտագործնական աջակցություն:

2. **«Երկիր և մշակույթ» կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը՝**

   1) սեփական միջոցների հաշվին կիրականացնի հուշարձանների ուսումնասիրման, պեղման, ամրակայման, նորոգման, վերականգնման և տարածքի բարեկարգման աշխատանքներ՝ առանձին հուշարձանների ընտրությունը քննարկելով և համաձայնեցնելով լիազոր մարմնի հետ,

   2) հնագիտական դաշտային հետազոտությունների արդյունքում հայտնաբերված նոր պատմամշակութային օբյեկտների մասին տեղեկատվությունը կփոխանցի լիազոր մարմնին՝ հուշարձանների պետական ցուցակներում օրենքով սահմանված կարգով դրանք ընդգրկելու նպատակով,

   3) իր իրավասությունների սահմաններում կցուցաբերի աջակցություն այլ հարցերում:

3" Հուշագրով նախատեսված պարտավորությունները կողմերը պարտավոր են կատարել պատշաճ: Հուշագիրը կարող է լուծվել կողմերից որևէ մեկի նախաձեռնությամբ՝ մյուս կողմի՝ հուշագրի պայմանները խախտելու դեպքում:

4. Կողմերը պարտավորվում են լրատվական միջոցներով լուսաբանել և ապահովել իրականացվող աշխատանքների հրապարակայնությունը:
5. Սույն հուշագիրը բաղկացած է 3 (երեք) էջից և կնքվում է հայերեն՝ 2 (երկու) օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին հատկացվում է սույն հուշագրի 1 (մեկ) օրինակը:
6. Սույն հուշագրում լրացումներ և փոփոխություններ կարող են կատարվել միայն կողմերի համաձայնությամբ՝ գրավոր:
7. Սույն հուշագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից:

ՀՀ ԿԳՄՍ նախարարություն՝

նախարարի տեղակալ՝

Ա. ՔՈՉԱՐՅԱՆ

_____
ստորագրություն

Բարերար՝

«Երկիր և մշակույթ» կազմակերպության

հայաստանյան մասնաճյուղի նախագահ՝

Դ. ԴԱՎԹՅԱՆ

_____
ստորագրություն